DOI: https://doi.org/ 10.59630/25792644-2025.1.28-45

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԿԱՊԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌՈՅԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՆԵԼՍԻԴԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Արագածոտնի մարզի Հնաբերդի՝
Երվանդ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն
nelsidanikoxosyan0@gmail.com

Բանալի բառեր – ազգակցական, ամուսնական, պատկերում, մոզարգելք, համատեքստ, բառոյագեղագիտական, ընկալում, հասկացույթ, ընտանեկան, հարաբերություններ:

Ներածություն

Ազգամշակութային կյանք հասկացությունը շատ տարողունակ է և ընդգրկում է մեծ ժամանակ՝ ներկա XXI դարից մինչև վաղնջական, անհիշելի ժամանակները, երբ նոր-նոր էին ձևավորվում ազգերն ու ազգամշակութային տարբեր հավաքականությունները: Այս տարողունակության և ժամանակային լայն ընդգրկման պատճառով ազգակցական, բարեկամական, ամուսնական և ընտանեկան հարաբերություններ արտահայտող բառերն ու տարաբնույթ լեզվառճական կապակցությունները նույնպես շատ հին են: Հին են նաև դրանց տրվող անունները՝ *հայր, մայր, ամուսին, կին, ուստր, դուստր, փեսա, աներ, զոքանչ, քեռի, հորաքույր, մորաքույր* և այլն: Նույնքան հին են նաև մարդկանց տրվող հատուկ անունները՝ Ադամ, Եվա, Կայեն, Աբել, Ադա, Սառա և այլն: Ազգաբանական մանրազնին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդկանց, ազգերին տրվող անուններն ի սկզբանե եղել են յուրօրինակ մոզար-

գելքի արտահայտություններ: Դա են հավաստում ինչպես ազգաբանական, այնպես էլ դիցաբանական ու կրոնական բնույթի շատ ուսումնասիրություններ: Ուշագրավ են հայտնի ազգագրետ Ջ. Ջ. Ֆրեզերի դիտարկումները՝ մասնավորապես՝ անձնանունների մոգարգելքի վերաբերյալ, որոնցով ցույց է տրվում, որ հին աշխարհում և տարբեր ժողովուրդների մոտ շատ հասկացույթներ առաջացել են մարդկանց անունները գաղտնի պահելու, գաղտնիացնելու հետևանքով: Իսկ թե ինչու էին թաքուն պահում կամ գաղտնիացնում անունը, դրա համար ունեին այլևայլ պատճառներ, բայց հիմնականն այն է, որ անունը դիտվում էր իբրև սակրալ (սուրբ) մի բան և ոչ թե մարդուն տրված մի սովորական պիտակ:

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԿԱՊԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Յուրաքանչյուր լեզվական արտահայտություն, անկասկած բովանդակության և ձևի օրգանական միասնություն է: Բովանդակության մեջ են մտնում տվյալ արտահայտության կամ ամբողջական որևէ երկի թեմատիկ-գաղափարական հիմքը, իսկ գեղարվեստական ձևը «պատկերման և արտահայտչական այն բոլոր միջոցների ամբողջությունն է, որոնք ծառայում են բովանդակության մարմնավորմանը /նման միջոցներից է նաև կոմպոզիցիան, սյուժեն, խոսքի ռիթմը, ժանրի ընտրությունը և այլն/: Իսկ տվյալ ստեղծագործության «բովանդակությունն ու ձևը կազմում են անխզելի միասնություն» »[1]:

Սույն հոդվածում առաջ քաշված խնդիրների լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի բովանդակության և ձևի նման հստակ ըմբռնումը, քանի որ ազգակցական, բարեկամական և

---

[1] **Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն.** Գործառական ոճագիտություն, Ե., «ԵՊՀ», 2011:

ամուսնական հարաբերություններ արտահայտող հասկացությունները, ինչպես նաև դրանց միջգիտակարգային և գեղարվեստական տարբեր կիրառումները որևէ համատեքստում, իրենցից ներկայացնում են հենց որոշակի բովանդակության /գաղափարաճանաչողական ու բարոյագեղագիտական ընկալման և ձևի /արտահայտման կերպի/ միասնություն:

Ստեղծագործության կամ առանձին լեզվական միավորի բովանդակությունն ու ձևը համակողմանիորեն ընկալելու և բնութագրելու համար պետք է անպայման հաշվի առնել նրանով հաղորդվող կամ տրվող պատմամշակութային ինֆորմացիան[2]:

Վերոնշյալ համակողմանիությանն է ձգտում, ահա, ըստ բովանդակության և ձևի դիտարկված հասկացությունների և դրանցով կազմված աստվածաշնչյան ու գրական-գեղարվեստական կիրառումների մատնանշումն ու բնութագրումը՝ հիմնվելով բովանդակության ու ձևի սերտ միասնության ընկալման վրա: Նման ընկալման ճշմարտացիությանն էին ուղղորդված աստվածաշնչյան քաղվածքները՝ կնոջ և ամուսնու փոխհարաբերության վերաբերյալ: Նման հասկացություններում շատ բան որոշվում է ազգակցության, բարեկամության և ամուսնության հիմքերի ճանաչումով, որոնցից կարևորագույնը և առանցքայինը նախ արյունն է, ապա և այդ հասկացություններին /=անվանումներին/ բնորոշ մեղմասացության /էվֆեմիզմի/ հատկանիշը: Արյունը, իբրև ազգակցությունը և բարեկամությունը և, դրանով իսկ, օտարվածությունը որոշող գործոն, առկա է ոչ միայն աստվածաշնչյան, այլև առասպելաբանական պատկերացումներում: Հին հունական առասպելներում կարևորվում է արյան դերը՝ մերձավորությունը և օտարվածությունը որոշարկելու գործում:

[2] **Գասպարյան Ս.Ք.,** Ձևի և բովանդակության միասնականությունը բանասիրական մոտեցմամբ, «Բանբեր» Երևանի համալսարանի, № 3, Ե., 2006:

Պետք է ասել, որ արյունը ելակետային, միջուկային բառ է կամ հասկացույթ, որը ցույց է տալիս ժառանգորդվածություն, կենարարություն, հարազատություն, սրբություն, ազգակցություն և այլն: Այն կենտրոնական հասկացույթ է թե՛ Հին, թե՛ Նոր Կտակարանում: Ծննդոց գրքից սկսյալ խոսք է բացվում արյան մասին, երբ Կայենը սպանում է իր եղբայր Աբելին՝ վաստակելով Աստծո արդար նզովքը. “Then the Lord said to Cain, “Where is Abel your brother?” He said, “I do not know; am I my brother’s keeper?” and the Lord said, “What have you done? The voice of your brother’s blood crieth to me from the ground. And now you are cursed from the ground, which has opened its mouth to receive your brother’s blood from your hand” /Genesis 4:9-11/:

«Տէր Աստուած հարցրեց Կայէնին. «Ու՞ր է քո եղբայր Աբելը»: Սա պատասխանեց. «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբօր պահակն եմ»: Աստուած ասաց. «Այդ ի՞նչ արեցիր, քո եղբօր արեան կանչը երկրից բողոքում է ինձ: Արդ, անիծեալ լինես երկրի վրայ, որը բացեց իր բերանը եղբօրդ՝ քո ձեռքով թափած արիւնն ընդունելու համար» /Ծննդ. 4:9-11/:

Նշյալ անգլերեն ու հայերեն թարգմանություններում առկա բառակապակցությունները՝ անգլերենում՝ «արյան ձայնը», հայերենում՝ «արյան կանչը», ակներևորեն սկզբնատիպային են, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն և, դրանով իսկ, հիմք են հանդիսացել հետագա բազմաթիվ՝ ժողովրդախոսակցական ու գեղարվեստական դարձվածքների համար, որոնց միջուկային կամ առանցքային բառը «արյունն» է՝ “Shed sb’s blood” – «արյուն թափել», “Have sb’s blood on one’s hands/head” – «արյան տակ ընկնել/մտնել», “Blood will tell” – «արյունը խոսում է» և այլն, և այլն:

Պետք է հավելել, որ Սուրբ Գրքում առկա են ազգակցական բազմաթիվ ցանկեր և նաև արյան վրեժը լուծելու հորդորներ: Ցանկերից նշենք մի քանիսը՝ Նոյի որդիների սերնդացանկերը /Ծննդ. 10, Ա. Մնաց., 1:5-23/, Հակոբի /Իսրայելի/ որդիների ծննդաբանութ-

յունը /տասներկու ցեղերի ծնունդները՝ Հակոբի տասներկու որդիները/, Դավիթ թագավորի պատերազմիկների ցանկը /Ա. Մնաց. 11:10-41, Բ Թագ. 23:8-39/, Դավթի որդիների ցանկը /Բ Թագ. 3:2-5/, Հիսուս Քրիստոսի ազգաբանությունը /Մատթ. 1:1-17, Ղուկ. 3:23-38/[1] և այլն:

Ցանկերը ցույց են տալիս, թե Սուրբ Գրքում որքան է կարևորվում ազգաբանական ու բարեկամական գործոնը, այն թե ո՛վ ո՛ւմից է սերում, ինչ է ժառանգվում սերնդեսերունդ /ժառանգականության գործոնը/: Այդ գործոնի աղբյուրն ու հիմքը, ինչպես ասվեց, նախ արյունն է, ապա և մարմինն ու ոսկորը, ինչպես նաև հավատքը:

Հետագա գրքերում ևս հիշատակվում և այլաբանվում է ոսկորը, որից արտածվում է այն միտքը, որ մարդու ոսկորը սուրբ է, նա է մարդու նախագիծն ու հիմքը և դրանով իսկ՝ նրա սուրբ զորությունը: Ուստի շատ տեղերում է ոսկորը այլաբանվում իբրև նույնության և նմանության հիմք /«Չորացա՛ծ ոսկորներ, լսեցէք Տիրոջ պատգամները: Ահա ես ձեր վրայ կենդանի շունչ եմ բերելու, ձեզ ջղեր եմ տալու եւ մաշկ եմ քաշելու, իմ հոգին եմ տալու եւ ձեզ, եւ դուք կենդանանալու էք: Եւ պիտի իմանաք, որ ես եմ Տէրը» /Եզեկիէլ 37:4-6/:

Սրբի ոսկորները կարող են ունենալ կյանք հաղորդող զորություն /«Այդ մեռած մարդու դիակը Եղիսէէի ոսկորների դիպչելուն պէս հանգուցեալը կենդանացաւ ու կանգնեց իր ոտքերի վրա», Դ Թագ. 13:21/: Հիսուս Քրիստոսի խորհրդանշանը հանդիսացող զատկական գառի ոսկորները չպետք է փշրվեն /«…դրա ոսկորը չպիտի ջարդէք», Ելք 12:46, «…դրա ոսկորները չպետք է ջարդէն», Թուեր 9:12, «Արդարների նեղութիւնները շատ են, Տէրն ազատում է նրանց այդ բոլորից: Պահպանում է նրանց բոլոր ոսկորները, եւ դրանցից ոչ մէկը չի փշրուելու», Սաղմ. 33:20-21/:

---

[1] Աստվածաշունչ, Սբ. Էջմիածին, 1994:

Նշյալ համարները այլաբանորեն ներկայացնում էին Հիսուս Քրիստոսին: Խաչի վրա նրա ոսկորը փշրվեց. «Բայց երբ եկան Յիսուսի մօտ ու տեսան, որ նա արդէն մեռած էր, նրա սրունքները չկոտրեցին, այլ զինվորներից մէկը տէգով խոցեց նրա կողը, եւ իսկոյն արիւն եւ ջուր ելաւ: Եւ ով այս բանը տեսաւ, վկայեց. եւ նրա վկայութիւնը ճշմարիտ է, եւ նա գիտէ, որ ճշմարիտ է ասում, որպեսզի դուք էլ հավատաք: Այս պատահեց, որպէսզի կատարուի գրուածը, թէ՝ նրա ոսկորը չպիտի փշրուի» /Հովհ. 21:33-36/[1]:

Ուրեմն ազգակցությունն ըստ Աստվածաշնչի /նաև, օրինակ՝ ըստ այլ արքետիպային աղբյուրների՝ հին-տոհմացեղային հավատալիքների/, նմանությունն է, նմանեցումը, որի հիմքը նախ արյունն է, որը կյանք է տալիս մարդուն /և արյունը կյանք է/, ապա և ոսկորը, որի հետ են կապված ժողովրդական շատ հավատալիքներ /ոսկորը՝ արիություն, ամրություն տվող հանգամանք, ոսկորը՝ վախի, վախկոտության հալածիչ, «վախը բռնող», ոսկորը՝ սրբազան հատկություն ունեցող և այլն/: Շատ հնարավոր է, որ աստվածաշնչյան ընկալումը՝ «ոսկոր՝ ոսկորից», վաղնջական ժամանակներից ի վեր առկա է եղել բազմաթիվ ժողովուրդների և ազգությունների հավատալիքներում /ինչպես որ «արյան» սրբազան լինելու ընկալումը/: Նույնականացման, հարազատացման հիմք հանդիսացող **արյուն և ոսկոր** հասկացույթները նշյալ իմաստավորումներով կիրառվել են այլալեզու բազմաթիվ դարձվածքներում՝ «Արյունը ջուր չի դառնա», «Կապույտ արյուն» /ազնվական արյուն/, «Արյան դիմաց՝ արյուն», «Մեր մեջ նույն արյունն է հոսում», «Դու իմ ոսկորն ես՝ իմ հարազատը» և այլն: Ուշագրավ է, որ թե՛ նախնական հասարակությունների, թե՛ զարգացած հասարակությունների կրոնական պատկերացումներում, մարդու /կամ կենդանիների/ այս կամ այն մարմնամասի մասին պատկերացումը հիմնականում նույն է:

[1] Նույն տեղում:

Ավածին պետք է ավելացնել, որ մարդու մարմնամասերին վերագրվում են ոչ միայն տիեզերաբանական ու առհասարակ բնութենական ինչ-ինչ կապեր ու հատկանիշներ, այլև՝ քաղաքական գործառույթներ՝ հոգին կայսր է և թագավոր, անձնիշխան կամքը՝ թագուհի, միտքը կայսեր խորհրդականն է, զգայարանները՝ դատավորներ և այլն[1]:

Նման /ոչ նույնանման/ վերագրումներ առկա են նաև տարբեր ցեղերի ու ժողովուրդների հավատալիքներում, ի տարբերություն քրիստոնեական հավատքի, գերակշռում է անիմիզմը /Тайлор Э. Б., 1989/[2], մարմնի այս կամ այն մասի մեջ առկա ուժը կամ ոգին: Կենտրոնական Աֆրիկայի ֆուրերի ազգույթն, օրինակ, հավատացած է, որ յուրաքանչյուր կենդանի արարածի հոգու օթևանը լյարդն է՝ արիության զետեղարանը, հետևաբար, եթե մարդն ուտի որևէ կենդանու լյարդը /որն, իմիջիայլոց, սուրբ է համարվում/ կընդլայնի կամ կուժեղացնի իր հոգին /Ֆրեզեր Ջ. Ջ., 1989:584/[3]: Ուշագրավ է, որ Աֆրիկայում նորելուկ զինվորներին սովորեցրել են ուտել սպանված թշնամու ականջները /խելքի զետեղարանը/, ճակատի կաշին /կայունության պատվի զետեղարանը/, սեռական անդամները /ուժի զետեղարանը/, ինչպես նաև այլ առաքինությունների զետեղարաններ համարվող անդամները: Համանման սովորույթներ են ունեցել նաև, ըստ ազգագրագետի, Գերմանական Նոր Գվինեայի կայսրը, աֆրիկյան զուլուսները /որ ուտում էին թշնամու ճակատի փափկամիսը և հոնքերը/: Բերելով բազմաթիվ հար և նման օրինակներ, հիմնվելով փաստական հարուստ նյութի, ինչպես նաև ազգաբանական այլևայլ հետազոտությունների վրա, Ջ.Ջ. Ֆրեզերը կատարում է խիստ ուշագրավ դիտարկումներ, ընդգծում, որ շատ

[1] Եփրեմվերդի գիրք:

[2] **Тайлор Э. Б.,** Первобытная культура, М., «Политиздат», 1989.

[3] **Ֆրեզեր Ջ.Ջ.,** Ոսկե ճյուղը, Ե., «Հայաստան», 1989:

նմանություններ նման հավատալիքների և, այսպես ասած, հասուն կրոնների միջև:

Լեզվի մեջ մնացել են թե՛ այդ հնագույն զոհագործությունների, թե՛ նոր՝ քրիստոնեական մտակեցվածքի ու դավանանքի մասին վկայող ասույթները՝ «Ականջներդ բաց արեք», «Ականջ ունես, բայց չես լսում», «Լեզի ունե՞ս, որ դիմանաս», «Լեղաճաք են եղել», «Ճակատը պինդ տղա է երևում», «Սուր պահես դեմը՝ աչք չի թարթի»,«Արյունդ կխմեմ, ախ չեմ քաշի», «Թշնամիս չդառնաս, ես քեզ հում-հում կուտեմ», «Ջգույշ՝ գլուխդ չուտեն» և այլն, որոնց տարբերակները կամ ազգամշակութային հոմանիշները կարելի է համարել հետևյալ անգլերեն ասույթները՝ Keep one’s ears open, have no ear for music, have one’s heart in one’s mouth, one’s heart sank into one’s boots, face to face և այլն:

Երրորդ՝ ընդհանուր ոլորտը, որ պայմանավորել է լեզվաոճական շատ միջոցների առաջացումը, պատմա-լեզվամշակութային ոլորտն է, այսինքն՝ կոնրետ պատմական, վարչատնտեսական, սոցիալական ու մշակութային այն դաշտը, որտեղ /և որի միջոցով/ կազմավորվել, հանրայնորեն իմաստավորվել և լեզվական շրջանառության մեջ են դրվել որոշակի լեզվաոճական արտահայտություններ: Այս պարագայում, կարելի է ասել, որ նման լեզվական արտահայտություններն իրենց մեջ կրում են շատ արտալեզվական ինչ-ինչ գործոնների լեզվաոճական առկայացումները: Դրա լավագույն օրինակը տալիս են լեզվաերկրագիտական ուսումնասիրությունները և դրանց հիման վրա ստեղծված լեզվաերկրագիտական բառարանները:

Լեզվի ոճական և արտահայտչական միջոցներ շատ են և դրանցից յուրաքանչյուրը յուրովի է արտացոլում պատմամշակութային իրադրությունը, այդ պատմամշակութային կյանքի արգասիք հանդիսացող մարդկային սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունները, ստեղված գիտական, գեղագիտական և այլ բնույթի ար-

ժեքները, իրերն ու առարկաները, այդ թվում՝ ազգային ինքնատիպության արտահայտիչները, որոնք լեզվի մեջ կազմում են մի շերտ, որոնք բնութագրվում են իբրև «իրենց համարժեք չունեցող բառային միավոր» և «տվյալ ազգային լեզվի բառապաշարի մեջ՝ էկզոտիկ շերտ»[1] (Тер-Минасова С. Г., 2001:261):

Սակայն արդի շրջանում հետազոտողները հակված են նշելու, որ դեռևս շատ բաց տարածություն կա ընդհանուր տիպաբանական ձևավորիչների հայտնաբերման կամ հաստատագրման ոլորտում, պայմանավորված նրանով, որ, ինչպես նշում է Ա. Սարգսյանը՝ «առայժմ գոյություն չունի մշակութային տիպաբանության առարկան, ըստ որի վերջապես պարզ կարող է դառնալ, թե ինչն է բնորոշում լեզվամշակութաբանական տիպ ասվածին, ինչ բաղադրիչներից է այն կազմված, ինչն է մշակութային տիպ հասկացության մեջ նյութակիր միավորը» /Սարգսյան Ա., 2002/[2]: Բացի դրանից՝ դեռ նոր-նոր է սկսել զարգացում ապրել լեզվաբանական ուսումնասիրությունների համեմատական մեթոդը, որի արգասիքը կարող են հանդիսանալ ինչպես տարբեր լեզվամշակույթների համար տիպաբանորեն ընդհանուր, այնպես էլ ազգամշակութային առումով եզակի, յուրատեսակ գծերը: Այն էլ ասենք, որ նման համեմատական ուսումնասիրությունների ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի նոր փաստեր ու եղելություններ, որոնք ցույց կտան, որ մինչ այդ զուտ ազգային ու եզակի համարվող լեզվական /ասենք, դարձվածային/ ձևերը զարմանալիորեն առկա են նաև ուրիշ լեզուներում: Այս հանգամանքը մեզ հուշում է, որ լեզուները վաղնջական անցյալում կամ կապված են եղել միմյանց մի «տիեզերական» ամբողջական առասպելով /որը հետագայում, «պայթյունի հետևանքով» բեկորների է բաժանվել՝ ի հայտ բերելով բազմաթիվ ազգային միֆեր,

---

[1] **Тер-Минасова С. Г.** Язык и международная коммуникация, М., «Слово», 2001.

[2] **Սարգսյան Ա.Ս.** Գեղարվեստական խորհրդանիշը որպես հեղինակի ոճի բաղկացուցիչ մաս, Ե., 2002:

լեգենդներ ու «նվազագույն կրոնականի» /Тайлор Э. Б., 1989/ պատկերացումներ /անիմիզմ/, կամ էլ, դրան զուգահեռ, ինչպես հավաստում է Սուրբ Գիրքը, եղել է մեկ ժողովուրդ և մեկ միասնական լեզու, որը և բաժանվել կամ տրոհվել է, նախնական՝ լայն իմաստով՝ տարբեր խոսվածքների /լեզուների/: Դա տեղի է ունեցել, ըստ Ծննդոց գրքի՝ բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ. «Այն ժամանակ ողջ երկիրը մէկ լեզվով, մէկ բարբառով էր խոսում» /Ծննդ. 1:1/:

Այսօր լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդը արդյունավետ կերպով ցույց է տալիս, որ կան ցեղակից լեզուներ, որոնք ի հայտ են բերում բառային ու քերականական ընդհանրություններ: Լեզուների զուգադրական-համեմատական նկարագրությունը օգնում է խորությամբ գիտակցել լեզուն ուղղորդող օրենքները /Ярцева В.Н., 1991/[1]: Միաժամանակ, սկսել են այդ հիման վրա ուսումնասիրել լեզվառճական իրողությունները և դրանցով կազմված դարձվածային միավորները (ԴՄ), նպատակ ունենալով վերհանել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, որ դրսևորում են ստացել տարբեր լեզուներում: Պետք է ասել, որ մինչ այժմ տեսական ու գործնական լեզվաբանության մեջ շեշտադրվել են ԴՄ-ների, որպես լեզվամշակութային խտացված արտահայտությունների ինքնատիպությունը, տարբերությունը լեզվամշակութային այլ արտահայտություններից, հատկապես՝ ազգային-հոգեբանական և մշակութային տարբերվածությունը:

Մյուս կարևոր գործոնը, ինչպես նշվել է, արյունից և ոսկորից հետո՝ հավատքն է /օրինակ, մեկաստվածություն դավանողների կամ քրիստոնյաների համար/ կամ հավատալիքները՝ տոհմացեղային հասարակություններում, ինչպես ցույց են տալիս ազգագրական ու մշակութաբանական հետազոտությունները: Մարդկային, ազգային ու կրոնական համախմբումների պարագայում, ինչպես նշում

---

[1] **Ярцева В.Н.** Большой энциклопедический словарь, Москва, «Советская энциклопедия», 1991.

են հետազոտողները, մեծ դեր է կատարել այն հավատալիքը, որ բուսական, կենդանական և անօրգանական աշխարհը օժտված են ինչ-որ կենսական էներգիայով, որ կարելի է անվանել հոգի /անիմիզմ/: Դա հնարավորություն է ընձեռում, ըստ հին տոհմացեղային հավատալիքների, պաշտպանվել չար ազդեցություններից /չար աչք, կախարդություն, հուռութք, չարամաղթություն, հաջողության կամ ուժի «գողացում» և այլն/, մյուս կողմից՝ նույն այդ կենսական էներգիայի շնորհիվ /որ առկա է բնության մեջ/՝ ձեռք բերել ուժ, հաղթանակ, լավ բերք, առողջություն, հաջողություն և այլն: Այդ ամենը՝ մի կողմից չար ուժերը չեզոքացնելը, մյուս կողմից՝ դրական ուժերը կիրառելը հանուն տվյալ համայնքի կամ ցեղի, հետազոտողները կոչել են **փաղիտրա** /Ֆրեզեր Ջ., 1989/[2], իսկ մովսիսական օրենքով՝ քավության նոխազ: Ահա այդ հավատքը կամ հավատալիքը համախմբել է ազգեր ու ազգություններ: Եվ հարց է՝ կհամախմբվեին նրանք միայն ըստ ոսկորի կամ արյան, եթե չլինեին այդ համախմբող և պաշտպանիչ նշանակություն ունեցող պատկերացումներն ու հավատալիքները: Ջ. Ֆրեզերը նշում է, որ փաղիտրայի մասին հավատալիքով առաջնորդվող ցեղերի մոտ մշտապես ստուգվել է, թե ի՞նչն է փաղիտրա ծառայել՝ տվյալ ցեղին կամ մարդուն կախարդելու, կործանելու կամ դժբախտացնելու համար:

Ինչպես հայտնի է փաղիտրայի դերում հանդես են եկել ինչպես առարկաները, այնպես էլ մարդիկ: Հին աշխարհում, պրիմիտիվ հանրույթների կենցաղում /կենցաղ, որը, կարելի է ասել, գրեթե ամբողջությամբ ուղղորդվել է մոգական, կրոնամիստիկական պատկերացումներով, քրմերի կամ կախարդների առաջնորդումով/ մեծապես տարածված է եղել ինչպես մարդազոհությունը, այնպես էլ մարդկանց օգտագործումը որպես մեղքերը վերցնող՝ փաղիտրա: Հիվանդությունները և ձախորդությունները դիտարկվել են, ընկալ-

[2] **Ֆրեզեր Ջ.Ջ.** Ոսկե ճյուղը, Ե., «Հայաստան», 1989թ.:

վել որպես ոգիների սանձազերծ գործողություններ, ուստի համաճարակների կամ ճգնաժամային իրավիճակների /սով, դժբախտություն, պատերազմ և այլն/ դեպքում նշյալ հանրույթները կամ արտաքսել են ոգիներին, կամ էլ նրանց զոհեր մատուցել: Վերջին պարագայում այդ զոհերը հանդես են եկել ֆաղիտրայի դերում, քանի որ նրանց են փոխանցվել ամեն տեսակի ձախորդություններն ու հիվանդությունները:

Ի՞նչ դեր է կատարում նոխազի կամ ֆաղիտրայի մասին գիտելիքը կամ պատկերացումը: Ամենից առաջ նա պաշտպանական և համախմբող նշանակություն ունի նրանով, որ արյան և ոսկորի նույնականությամբ միմյանց ազգական և բարեկամ համարվող մարդիկ պաշտպանվել են/և մինչև այսօր էլ պաշտպանվում են՝ փոփոխված կամ արդիականացված հասկացույթների ներքո/ օտար կամ թշնամի համարվող ցեղախմբերից ու ժողովուրդներից: Դրանով իսկ նրանք կազմել են ազգակցական-բարեկամական խմբեր: Քավության նոխազը Հին Կտակարանում կատարել է այն դերը, որ նպաստել է, նույնիսկ մեծապես ազդակել Իսրայելի ժողովրդի համախմբմանը, կրոնաբարոյական հատուկ կողմնորոշում ունեցող գաղափարների, ծեսերի շուրջը, պահպանել ցեղը /նույն արյունը/ ուծացումներից ու խառնարկումներից: Այն ունեցել է մաքրագործիչ նշանակություն, ուղղված է եղել, առհասարակ, ազգի պահպանմանը: Իսկ ինչի՞ց է պահպանվել ազգը քավության նոխազի շնորհիվ. պահպանվել է ոչ միայն արյան խառնարկումից, այլև կրոնաբարոյական բնույթի շեղումներից: Այն հնարավորություն է ընձեռել տվյալ ազգային ու կրոնական համայնքին /տվյալ դեպքում՝ Իսրայելին/ հարատևել, պահպանել ժառանգականորեն տրված իր տեսակն ու հաջորդ սերնդին փոխանցել իր ավանդույթներն ու ծեսերը և, ամենակարևորը՝ կատարել է մաքրագործիչ դեր՝ քավելով ժողովրդի՝ կամա և ակամա գործած մեղքերը, դրանով իսկ խորհր-

դանշելով հավիտենական Ջոհի՝ Հիսուս Քրիստոսի փրկչարար և սուրբ խաչելությունը՝ հանուն Աստծո ժողովրդի փրկության:

Դա էին խորհրդանշում աստվածառաք մովսիսական պատվիրանները /Ելք 20:3-17/, որոնց կատարմանն էին նպատակաուղղված նաև քավության նոխազների և հատուցումների մասին կատարումները /Ելք 21:12-35, Ելք 22:1-31, Ելք 23:1-33/: Հատուկ կերպով նշված է քավության նոխազին զոհաբարելու կարգը՝ «Ահարոնն իր ձեռքերը թող դնի կենդանի նոխազի գլխին, խոստովանի Իսրայելի որդիների գործած բոլոր անօրէնութիւնները, նրանց բոլոր յանցանքներն ու բոլոր մեղքերը: Նա դրանք թող թափի կենդանի նոխազի գլխին ու յարմար մի մարդու միջոցով այն ազատ արձակի դեպի անապատ: Այս նոխազն իր վրայ պիտի վերցնի իսրայէլացիների գործած բոլոր մեղքերը անմարդաբնակ մի վայրում: Ահարոնն այդ նոխազը պիտի արձակի դեպի անապատ» /Ղևտ. 16:21-23/:

Սուրբգրային լեզվամտածողությունը մեղմասություններ /էվֆեմիզմներ/ է կիրառում կենակցային անարգ հարաբերությունների վերաբերյալ՝ «մերձենալ», «ամօթոյքը բանալ», «չպառկել» և այլն, որոնցով ցույց է տալիս, որ մարդը չպետք է պիղծ ու տգեղ բառեր օգտագործի: Սահմանվում են նաև սրբության և արդարության օրենքներ՝ յուրաքանչյուրն ակնածի իր հորից ու մորից, իր ընկերոջը չզրպարտի և նրանց չզրկի հասանելիք իրավունքից՝ նրա ունեցվածքը հափշտակելով, ամենակարևորը՝ սիրի իր ընկերոջը՝ ինչպես ինքն իրեն /Ղևտ. 19:3, 13, 16, 18/: Ղևտ. 20-րդ գլխում մի առ մի թվարկվում են մահվան արժանի մեղքերը՝ տղամարդը թող չպառկի իր հոր կնոջ, իր հարսի, մեկ այլ տղամարդու հետ, թող չխառնակվի որևէ անասունի հետ /այս դեպքում պետք է այդ մարդուն ենթարկել մահապատժի, իսկ այդ անասունին՝ սատկեցնել/: Արգելվում է ամուսնությունը հորից կամ մորից ծնված խորթ քրոջ հետ, կնոջ ու նրա աղջկա հետ՝ միաժամանակ, թող չհամարձակվի բացել մերձավորների /հորաքույր, մորաքույր, եղբոր կին, քեռու կին և այլն/ ամո-

թույքները: Այդօրինակ «համարձակությունները» պիղծ են, խախտում են արյան սրբության վրա դրված սուրբ կնիքը՝ գործելով արյունապղծություն՝ միաժամանակ խախտում են աստվածային առաջին և գլխավոր պատվիրանը՝ «Սուրբ եղէք, քանզի ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ» /Ղևտ. 19:2/:

Ուրեմն, ըստ աստվածաշնչյան հայեցակերպի՝ ամուսնությունը սուրբ է, ինչպես և ձևակերպում է Ս. Պողոս առաքյալը. «Ամուսնութիւնը ամէն կողմանէ պատուական է եւ անկողինը սուրբ» /Եբր. 13:4/: Ամուսնությունը /=ընտանիք կազմելը/ հաստատվել է դեռևս դրախտի մեջ, քանի որ Աստված, մարդուն իր պատկերով ստեղծելիս, ստեղծեց Ադամին և Եվային՝ արու և էգ. «...արու եւ էգ ստեղծեց նրանց: Եւ Աստված օրհնեց նորանց, եւ Աստված ասաց նորանց. «Աճեցէք եւ շատացէք, եւ լցրէք երկիրը, եւ տիրեցէք նորան...» /Ծննդ. 1:27-28/:

Այսպիսով, քրիստոնյա ժողովուրդների մոտ հաստատուն տեղ են զբավում ազգակցական, բարեկամական և ամուսնական կապերին վերաբերող աստվածաշնչյան պատգամները, օրենքները և գրավոր կամ բանավոր ավանդած սրբազան ավանդությունները՝ մեծապես նպաստելով հասարակական-սոցիալական կյանքի ուղղորդմանը բարոյական վեհ գաղափարների և քաղաքացիական բարձր գիտակցության ճանապարհով: Այդ ամենն, իհարկե, արտացոլվել է թե՛ անգլերեն ու հայերեն, թե՛ քրիստոնյա այլ ժողովուրդների ու ազգերի լեզվամշակույթում, մասնավորապես՝ դրանց վերաբերող հասկացույթներում ու դարձվածքներում:

Ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր արտահայտող բառերը, ըստ հետազոտողների, իրենց մեջ կրում են հոգևոր մշակույթի մասին տեղեկույթ, միաժամանակ ազդակում են մշակույթների ձևավորմանը և զարգացմանը՝ հանդես գալով իբրև «մշակութային թանձրացումներ մարդու գիտակցության մեջ»

/Степанов Ю.С. 1997:40/՝[1] ազդակելով անհատական և հասարակական կյանքի տարաբնույթ դրսևորումները: Այսպես, «ընտանիք», «ամուսին», «կին», «հարս», «փեսա», «քենի», «զոքանչ», «աներ», «եղբայր», «քույր», «խնամի», «բարեկամ», «քեռի», «հորեղբայր», «մորաքույր», «հորաքույր», «ընկեր», «ծանոթ», «մտերիմ», «որդի», «դուստր», «ժառանգ» և մյուս հասկացույթները ունեն ոչ միայն ճանաչողական նշանակություններ, որպես գիտելիքի արտահայտություններ, այլ նաև գործուն, թելադիր, պրագմատիկ հատկություններ՝ պայմանավորված դրանց կրոնական, բարոյական, սոցիալ-հոգեբանական, մշակութային, գաղափարագեղագիտական, իրավական ու քաղաքական իմաստավորումներով՝ կախված ժամանակաշրջանից ու ժամանակային պահանջմունքներից: Եթե, օրինակ, «ընտանիքը» ոչ հեռու անցյալում ընկալվում էր իբրև գերագույն սրբություն, որը պահպանվում էր Եկեղեցու և Պետության հովանու ներքո, այսօր կարծես թե կորցնում է երբեմնի ակնածալի դիրքը՝ կապված Եկեղեցու դերի նվազման, բարքերի համընդհանուր ազատականացման, սոցիալ-տնտեսական վատթար վիճակի, շուկայականգործնական ընկալումների գերակայացման և այլ կազմաքանդիչ նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական բազում գործընթացների ու տարիմաստ որոշ նկրտումների իրականացման հետ: Ինչպես և մյուս՝ հիմնարար նշանակություն ունեցող հասկացույթները, «ընտանիքը» ևս այսօր ենթակա է տարաբնույթ «հարձակումների», որոնք հեռահար նպատակ ունեն կազմալուծել այդ նվիրական կառույցը, որը, սուրբ հայրերի խոսքով՝ նույն քրիստոնյաընդհանրական Եկեղեցու օրինակն ու պատկերն է՝ մարդկային-հասարակական կյանքից ներս: Քանի որ հասկացույթները /«ընկեր», «բարեկամ», «զավակ» և այլն/, ինչպես և «ընտանիքը», ենթակա են փոխակերպումների, որպես սոցիալ-հոգեբանական նորմերի կրող-

[1] **Степанов Ю.С.** Аспекты мифа, М., 1997.

ներ, ուստի կարելի է ասել, որ դրանք չեն կարող դուրս մնալ «տվյալ ժամանակաշրջանում գերիշխող «ոգուց» /Ալավերդյան Ա. 2012-2013:218/[2]: Թեև վերոնշյալ շատ հասկացույթներ, կապված հասարակական սոցիալ-հոգեբանական մի շարք գործընթացների հետ, ենթակա են որոշակի փոխակերպումների՝ իրենց ընկալումների և «վարքաբանական» դրսևորումների առումով, բայց հիմնականում մնում են կապված իրենց արմատական-արքետիպային ընկալումների հետ՝ «ընտանիքն», այսուամենայնիվ, մնում է «ընտանիք», «եղբայրը»՝ «եղբայր», «բարեկամը»՝ «բարեկամ» և այլն: Բայց և պետք է նշել, որ նման՝ հասարակական կյանքի կենդանի հոսքի հետ կապված «հասկացույթներն» իրենց մեջ կրելով այդ կյանքի տարբեր դրսևորումները /=ընկալումներ/, ներկայացնելով միջգիտակարգային բնագավառների՝ կրոնին, փիլիսոփայությանը, հոգեբանությանը, իրավունքին, սոցիոլոգիային և այլ գիտակարգերին ներհատուկ ընկալումները, չի կարող ուղղակիորեն չփոխվել, չհարմարվել ժամանակին ու նրա գաղափարագեղագիտական շարժընթացին: Դրա համար էլ, ասենք մարդը /ամուսինը/ և կինը /կողակիցը/ նորկա ժամանակահատվածում թերևս չեն կարող վերադառնալ առաքելական ժամանակներին և լիովին իրականացնել առաքելական հորդորը, որը վերաբերում է հիմնականում կնոջը.

But I want you to understand that the head of every man is Christ, the head of Christ is God. Any man who prays or prophesies with his head covered dishonors his head unveiled dishonors her head – it is the same as if her head were shaven /I Corinthians 11:3-5/:

«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամեն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած: Ամէն տղամարդ, երբ աղոթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատվում է իր գլուխը եւ ամէն կին, երբ աղօթքի

---

[2] **Ալավերդյան Ա.**, «Բարեկամ» հասկացույթի վերլուծությունը անգլերենում և հայերենում միջմշակութային տեսանկյունից: Աստղիկ 22-23, Ե., Սահակ Պարթև, 2012-2013:

կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատվում է իր գլուխը. որովհետև այնպէս է համարվում, թե իբր գլուխն ածիլուած լինի...» /Ա. Կորնթ., 11:3-5/[1]:

Իհարկե ներկա ժամանակաշրջանում, երբ տարփոխվում է մարդու ազատությունների և իրավունքների մասին օրենքը, ոչ բոլոր կանայք են ծածկում իրենց գլուխը, և ոչ էլ բոլոր այր մարդիկ են գիտակցում, որ իրենց «գլուխը Քրիստոսն է», քանզի էապես փոխվել է կնոջ և տղամարդու փոխհարաբերության մասին պատկերացումը. կինը հավասար է տղամարդուն՝ իրավազորության առումով. նա պարտավոր չէ կրավորական դիրք գրավել տղամարդու նկատմամբ՝ անհատական, ընտանեկան և հասարակական կյանքում. Ճիշտ հակառակը իր հասարակական գործունեությամբ այսօր կինը համահավասար է տղամարդուն և կարող է նաև ղեկավարել նրան: Պարզ է, որ հասկացույթները պահպանելով հանդերձ իրենց սկզբնատիպային նշանակությունները՝ որպես ազգալեզվամշակութային կյանքի և պատկերացումների «հաղորդիչներ»՝ կարող են որոշակի փոխակերպումների ենթարկվել՝ իմաստային նոր երանգների և առնշանակությունների ձեռքբերման առումով /Маслова В.А. 1997:53/[2], քանի որ հասկացույթները, ըստ հասկացութաբանների, «գաղափարայնացված բազմաչափ ձևակազմություններ են» /Ляпин С.Х. 1997:16/[3] և որպես այդպիսիք, որպես կոլեկտիվ գիտելիքի միավորներ ու բարձրագույն հոգևոր արժեքների ցուցիչներ՝ մի կողմից՝ իրենք են ծնվում նրանից, այդ ընթացքում օժտվելով որոշակի առնշանակություններով՝ կապված ժամանակի «ոգու» հետ:

Նշյալ հասկացույթները ժամանակի ընթացքում և գլոբալ ուղղաձիգ համատեքստերում ձեռք բերած ինչ-ինչ իմաստային կամ հուզական երանգավորումների պատճառով հաճախ հեռանում են

---

[1] Աստվածաշունչ, Սբ. Էջմիածին, 1994:
[2] **Маслова В.А.,** Лингвокультурология, М. изд. «Academia», 2004.
[3] **Ляпин С.Х.,** Структурная антропология, М., «Наука», 1997.

իրենց սկզբնատիպային կամ արքետիպային բուն գործառույթներից, որոնցից, թվում է, ամենակարևորը դրանց այլ կերպ, այլ մտադրությամբ մի բան ասելն է, այսինքն՝ էվֆեմիզմը /հուն. Euphemismos, eu – լավ, phemi – խոսում եմ, ասում եմ = մեղմասություն/, որը հայերեն թարգմանվում է նաև իբրև գեղասություն /Խլղաթյան Ֆ.Հ., 1976:25/[1]: Նման գեղասացությունը շատ հին արմատներ ունի և առնչվում է հին տոհմացեղային հավատալիքների, առասպելական շրջանի ավանդությունների և կրոնական /աստվածաշնչյան/ սյուժեների հետ: Բանն այն է, որ շատ աֆրիկյան ու հնդկացիական ցեղերի, ինչպես նաև եվրոպական ժողովուրդների մոտ տարածված է եղել որոշ իրերի, առարկաների, գործողությունների, անձնանունների վրա դրվող մոգարգելքը: Ջ.Ջ. Ֆրեզերը նշում է այլացեղ մարդկանց հետ շփվելուն, ուտելիքին և խմելիքին, դեմքը բացելուն, դաշտանի մեջ գտնվող կանանց, սուր զենքերին, երկաթի գործածությանը, արյանը, մազերին, հանգույցներին, անձնանուններին վերաբերող մոգարգելքները /Ֆրեզեր Ջ.Ջ., 1989:234-312/[2]:

Կարելի է ասել, որ շատ հասկացույթներ պարզապես հետևանք են էվֆեմիզմի՝ մեղմասացության, որովհետև փոխանակ տալու որոշակի մարդու /ազգականի, բարեկամի բնութագրիչները, դրանով իսկ իմաստավորելով նրա անձն ու դերը՝ ընտանեկան ու հասարակական կյանքում: Ինչ-որ մի տեղ այդ էվֆեմիզմները նաև զաղտասացություններ կամ նույնիսկ շրջասություններ են: Այդպիսիք կարող են համարվել, օրինակ, հետևյալները՝ «գլխիս տերը» /փոխանակ ասելու՝ «ամուսինս»/, «տան մեծը» /փոխանակ ասելու՝ «հայրս» կամ «պապս»/, «մեր տղան» /փոխանակ ասելու «որդիս» կամ «զավակս»/ և այլն: Այդպիսի էվֆեմիզմներ կարելի է ցույց տալ տարբեր խոսույթներում, բանահյուսական տեքստերում և, մասնավորապես, Աստվածաշնչում: Բնորոշ են, օրինակ, հետևյալները՝ կապված ազ-

[1] **Խլղաթյան Ֆ.Հ.,** Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., «Լույս», 1976թ.:
[2] **Ֆրեզեր Ջ.Ջ.** Ոսկե ճյուղը, Ե., «Հայաստան», 1989թ.:

զակցական, բարեկամական և ամուսնական փոխհարաբերություն-ների հետ՝ չհաշված այլ կարգի հասկացույթները, որ բազմաթիվ են Սուրբ Գրքում.

Then the Lord God said. “It is not good that the man should be alone; I will make him a helper fit for him.” /Genesis 2:18/:

«Տէր Աստուած ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի։ Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» /Ծննդ. 2:18/:

Այստեղ փոխանակ ասելու «մի կին», ասվում է “a helper” /«մի օգնական», որը ընդհանրացնում և բնորոշում է կնոջը որպես իր մարդու օգնականի։

Նույն Ադամը կնոջ մասին ասում է.

Then the man said,

“This at last is bone of my bones

and flesh of my flesh;

She shall be called Woman,

Because she was taken out of Man.”

/Genesis 2:23/

«Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից։ Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղ-ծուեց» /Ծննդ. 2:23/:

Նշյալ արտահայտությունները /«ոսկոր է իմ ոսկորներից», «մարմին՝ իմ մարմնից»/ և «կին» բառը ընդհանրացնում, բնորոշում և ճշգրտում են Եվայի՝ առաջին կնոջ ստեղծման բուն նպատակն ու գործունեության կերպը, ըստ որում այս համատեքստում “woman” /«կին»/ նշանակում է «սիրելի եւ պատուական ընկեր եւ օգնական, ոչ թէ աղախին մարդուն, Ծննդ. Բ. 23, 24, ստեղծեալ իբրեւ հարկա-ւոր ի լրացնել զմարդն…» /Բառարան սուրբ գրոց, 1992:276/:

Խոսելով ապօրինի ամուսնությունների և կենակցությունների մասին, Աստվածաշունչը զգուշացնում է ազգակցի, արյունակցի,

հոր, մոր և մյուս հարազատների դեմ մեղք գործելուց, որովհետև ազգակցությունը և արյունը սուրբ են համարվում:

“None of you shall approach any one near of him to him to uncover nakedness. I am the LORD. You shall not uncover the nakedness of your father, which is the nakedness of your mother; she is your mother, you shall not uncover the nakedness. You shall not uncover the nakedness of your father’s wife; it is your father’s nakedness. You shall not uncover the nakedness of your sister, the daughter of your father or the daughter of your mother, whether born at home or born abroad. You shall not uncover the nakedness of your son’s daughter or of your daughter’s daughter, for their nakedness is your own nakedness. You shall not uncover the nakedness of your father’s wife’s daughter, begotten by your father, sinche she is your sister. You shall not uncover the nakedness of your mother’s sister, for she is your mother’s near kinswoman…” /Leviticus 18:6-13/.

«Որևէ մէկն իր արիւնակից հարազատին թող չմօտենայ նրա ամօթոյքը բանալու նպատակով, որովհետեւ ես եմ Տէրը: Քո հօր ամօթոյքը կամ մօր ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո մայրն է: Նրա ամօթոյքը չբանաս: Քո հօր կնոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ դա նաև քո հօր ամօթույքն է:

Քո հօրից կամ մօրից ծնուած, քո հօր տան մէջ կամ դրսում ծնուած քրոջդ ամօթոյքը չբանաս: Քո որդու աղջկայ ամօթոյքը չբանաս կամ քո աղջիկ թոռան ամօթոյքը չբանաս, որովհետեւ դա նաև քո՛ ամօթոյքն է: Քո հօր կնոջ դստեր ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա նոյն հօրից ծնուած քո քոյրն է: Նրա ամօթոյքը չբանաս:

Քո հօրաքրոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո արիւնակից հարազատն է: Քո մօրաքրոջ ամօթոյքը չբանաս, որովհետեւ նա քո մօր արիւնակից հարազատն է» /Ղևտ. 18:6-13/:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սուրբ Գիրքը արգելքներ է սահմանում խառնամուսնությունների վրա, հորդորում է պահպանել արյան և ազգակցության սրբությունը, ընդ որում այդ ամենի

մասին խոսում է պատշաճությամբ կամ մեղմասացությամբ՝ շրջանցելով «կենակցել» բառը և դրա փոխարեն գործածելով «ամօթոյքը չքանաս» արտահայտությունը: Աստվածաշնչյան բարոյագիտական պատկերացումները և ճանաչողական, հոգեբանական ու նաև գեղագիտական նշանակություն ունեցող օրենքներն ու հորդորները՝ կապված ազգակցական, բարեկամական ու ամուսնական հասկացությունների հետ, լայնորեն շրջանառվել են տարաբնույթ ոլորտներում /մարդաբանություն, լեզու, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավաբանություն, բժշկություն, գեղարվեստական գրականություն և այլն/:

Եզրակացություն

Հարցի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աշխարհի մեծագույն մտածողներն ու գրողները իրենց ստեղծագործություններում կիրառել են աստվածաշնչյան անանց իմաստությունները և գիտելիքները, գեղարվեստորեն արտացոլելով դրանք իրենց դրամաներում /Շեքսպիր/, չափածո խոսքում /Բայրոն/, լեզվաոճական, լեզվաբանաստեղծական ու վեր-վերնշանային մակարդակի տարբեբաբնույթ ուսումնասիրություններում և այլն:

Այսօր, կապված վերը նշված ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր արտահայտող հասկացությունների հետ, զարգանում են կենսաբարոյագիտական նշանակություն ունեցող հարցեր, որոնք մեկնարկում են Աստվածաշնչից, իբրև ելակետային և կողմնորոշիչ արքետիպերի սկզբնաղբյուրից:

Ասվածի առումով հույժ ուշագրավ են բիոէթիկային և բիոիրավունքին, բիոէթիկայի մշակութային հիմքերին, բիոէթիկայի աշխարհայացքային ավանդույթներին, բիոէթիկայի ֆենոմենին, բիոէթիկային և ժամանակակից բժշկության կապերին նվիրված աշխատանքները, որոնցում բիոտեխնիկական հեղափոխության դարաշրջանին բնորոշ հայացքով և գիտական կտրվածքով են քննարկվում,

ի թիվս այլ հարցերի, նաև ազգակցությունը, բարեկամությունը և ամուսնական կապերի վերաբերող հարցերը:

Այն էլ պիտի ասել, որ թե՛ ազգակցական, թե՛ բարեկամական և թե՛ ամուսնական կապերին վերաբերող հասկացույթները մեկ և միևնույն՝ «մարդ» հասկացույթի ածանցումներն են, ընդ որում այն մարդ էակի, ով պատվել է Աստծո կողմից՝ նրա նմանությամբ և պատկերով, ուստի և՝ օժտված է իր Ստեղծողի հատկանիշներով՝ սիրո զգացումով, իրավունքի, պարտքի և ազատության ու արդարության իր գիտակցումով՝ գործոններ, որ կազմավորում և ուղղորդում են մարդու անձնական, ընտանեկան և հասարակական կյանքը:

Нельсида Никогосян, Морально-эстетическая значимость понятий концепций выражающих родословные и супружеские отношения – Понятие жизнь национальной культуры не однозначно, оно охватывает очень большой промежуток времени – начиная с XXI века до старинных времен, когда различные общины наций и национальных культур только-только начинали формироваться. Следовательно, слова, словосочетания и лингвостилистические средства с целью называть эти отношения тоже очень старые. Так, например, такие слова, как *отец, мать, муж, жена, сын, дочь, зять, тесть, тёща, дядя, тётя* и т.д., собственные имена людей, как *Адам, Ева, Кайен, Абел, Ада,* не являются новыми – они относятся к старинным временам. Генеалогические исследования показывают, что имена людей с самого начала были выражениями какого-то магического запрета. Это потверждается многочисленными генеалогическими, мифологическими и религиозными исследованиями. Предположения известного этнографа Дж. Фрейзера свидетельствуют о том, что в старые времена разные народы либо скрывали имена людей, либо держали их в секрете. А на вопрос, с какой целью они поступали так, нет одно-

значных ответов. Преобладает гипотеза, что имя человека считалось священным, а не просто элементом этикета, данным этому человеку.

Nelsida Nikoghosyan, Ethical-aesthetic Value of Concepts Expressing Kinship and Connubial Relations – The concept of national culture is voluminous and includes a huge period of time beginning from the present century to the ancient times when nations and various national cultural communities were just taking shape. Because of this long period of time, the words and different linguostylistic means expressing the above mentioned relations are very old as well. And so are the words given to them: such as father, mother, husband, wife, son, daughter, son-in-law, father-in-law, mother-in-law, uncle, aunt, etc. The proper names given to people are also old such as Adam, Eve, Abel, Ada, Sarah, and Cain.

The minute genealogical studies show that the names of people were, from the very beginning, an expression of a sort of bewitching ban. This is confirmed by various genealogical, as well as by mythological and religious investigations. The considerations of the ethnographer J. Freser are noteworthy in terms of the bewitching bans given to people. They are based on the idea that in the ancient world and in various peoples, many concepts came into existence as a result of keeping people's names secret or making them secret. A question is bound to arise: what were the reasons of such a behaviour? There is no unanimously agreed explanation to the question that the prevailing idea is that a person's name was considered something sacral and not an ordinary label given to him/her.

Ուղարկվել է խմբագրություն 27.02.2025թ.
Գրախոսվել է 28.02.2025թ.
Ստորագրվել է տպագրության 06.03.2025թ.